

ԳԱՐԵԳԻՆ ԲԵՍ





ԱՐՁԱԿ

ԲԱԿԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1933

ՊԵՏԱՐԱՏ-ՅԵՐԵՎԱՆ









ԳԱՐԵԳԻՆ ԲԵՍ

Արակն




ԲԱՆԱՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

104



ՊԵՏՈՒՀԱՏ  
ՑԵՐԵՎԱՆ  
Հ. Պ. Հ.



Շապիկն ու դարդանկաբները՝ հ. Շավարշ  
Տելո. խմբագիր Մ. Եփրիկ.  
Սըբագրիչ Գար. Հակոբյան  
Հանձնված և արտադրության 27 մարտի 1933 թ.  
Սառագրված և տպելու 7 մայիսի 1933 թ.

---

Պետհրատի տպարան, գլավլիս № 8103 (բ), հրատ. № 2531,  
պատվիր № 805, տիրամ 3000



## Ի՞նչ գեշեթիկ, Ի՞նչ թարմ և ՎԱՐԴԵՐԸ

«Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ թարմ եյին վարդերը»  
Տուրք գեղեցիկ,

Ցես կտնզնած եմ պատռւհանիո տուաջ ու գիտում եմ զուբոը;  
Հիմա գարուն ե և անուշ բուրաւմ են ծաղկավրմած ծառերի ծա-  
ղիկները թակում հսուում և տալակիը և նրա կարկաչյունի հետ  
ականջիս կտրծես հասնում և մի խուզ պատավական չչնջոց.

Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ թարմ եյին վարդերը...

Ցես լսում եմ այդ, ու անցալը «Գեղեցիկ», «Թարմ» վարդերը  
բարձրանում են իմ տաւաջ.

Ցես ահսնում եմ իմ կյանքի սահմաշունչ գարունը, կորացած  
մարդկային միջները և ամայի դաշտերը

Ցես հիջում եմ նորս ու թվում և թե հիմա նա ինձ մոտ ե,  
կտնզնած և գիմացո և որբում և ճակածի քրտինքը. թվում ե, վոր  
շարժվում են նրա զրթունքները և նույն ժանոթ բառերը շնջում.

— Զարչարվում ենք բայց գարձյալ մենք ենք ոռված մնում:

Հետո, այդ անհետացող խավարի միջ, իմ գեմ բարձրանում ե  
նրա գիտերը, իսկ գիտելի մոտ՝ անցյալ ժամանակը, յեր արյուն ու  
արցունք եր, յերը

Պոչ գեղեցիկ, փոչ թարմ եյին վարդերը

Յես գործարանային մի բանվոր եմ, վոր աշխատում եմ մեր յերկը կառուցման համար, բարգավաճման համար ու խնդության ժաղիկներ ցանելու համար:

Յես զատ պարզ տեսնում եմ, թե ինչպես են պյուղերում միացել դաշտերը, աշխատանքը, ուժը, և յս դիտեմ, վոր հենց զբա մեջ և հաղթանակը. հաղթանակ՝ հնի, թշնամի ուժերի դեմ:

Յես տեսնում եմ ինդուստրացող նոր ու հին քաղաքներ, դի- գանաներ, վոր տիեզերքը յերբեք չի տեսնել ու գիտեմ, վոր այդ մենք ենք կառուցում, մենք՝ գործարանային բանվորներս, մենք՝ կուեկտիվ դաշտերի բանվորներս:

Յես տեսնում եմ կյանքի աճումը, բարձրացող մեր յերկիրը, տեսնում եմ, թե ինչպես են զարվում ապագա մեծ շենքի քարերը, և տեսնում եմ հորդացող տաճան, կառուցման խինդը:

Յես տեսնում եմ մեր այսորվա վաղը, նոր կյանքի ապագան և իմ հոգում, իմ սրախ խորքերում:

Ի՞նչ գեղեցիկ ի՞նչ թարմ են վարդերը:

Յես գործարանային մի բանվոր եմ և սիրում եմ ինձուս գործարանային մի բանվորունու ու միշտ նայում եմ նրա հուբ- հրատող աչքերին, ջուտ մկաններին և յերկաթագույն այտերին:

Գիտմք թե ի՞նչ համաշափ զարկում, բարախում և նրա նոր փթթած, գաղտնիքներով, հուզումներով լի կուրժքը, դիտմք թե նա ի՞նչքան և թանդ ի՞նձ համար, թե

Ի՞նչ գեղեցիկ ի՞նչ թարմ են վարդերը:

Դրսում ավելի ու ավելի խտանում և խավարը, և սենյակում պայծառանում և ելեկտրական լույսը, ու յս պարզ տեսնում եմ անցյալը, յերբ

Վոչ գեղեցիկ, վոչ թարմ եյին վարդերը:

Ե՞յ, այդ ովքեր են այդքան բարձր յերգում, խնդում ու կամե- նում բեկել կյանքը...

Ա՛, յս նրանց ճանաչում եմ, նրանք իմ ընկերներն են, աշխա- տանքի, կառուցման ու խնդության ընկերներս:

Յես մենակ չեմ, մենք միասին ենք կառուցում:

Այս, այն, միասին ենք աշխատում, մենք կամենում ենք ընկել կյանքը, անվերագարձ տապանել, թաղել անցյալը, վոր միշ-

Յեզ գեղեցիկ, և թարմ լինեն վարդերը





## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՐԴԱԼՈՒԹՅՈՒՆ

Մայիս, նա տեսել և քո արջալույսը, յերբ արյան շիթերի մեջ  
արեկի ջողերն են պարել, յերբ աջխարհում գնդակ կար, դիակ կար  
ու արյուններ

Նա տեսել և քո արջալույսն ու արեկն արնակարմիր, և մա-  
յիսյան այդ առավոտը նրա փոքրիկ որտից հոսել և արյուններ

Յերկրում ավեր և յեղել ու հողը տվել և արյան հասկեր, և  
ընկել են մարդիկ՝ անթիվ ու անհամար

Ու յերբ որերն անցան, նորից յեղավ կրակ, ու մարդիկ ընկան  
նորից, հետո հավաքվեցին վերջին մարտիկները և անեղ պայքարի  
յելանն...

Գիշեր եր, փոթորկուս մի խավար գիշեր ու գըսում վոռնում  
եր քամին...

Այդ գիշեր այնքան հուզված սրաեր կային ու մարդիկ պատ-  
րասա մտրախ...

Այդ գիշեր իր հայրն ել մարտի պիտի յելներ ու ոռումք պիտի  
պայթեցների

Այդ գիշեր նա պիտի թողներ տանը կնոջը և փոքրիկ յերե-  
խային, իրեն...

Յերբ մոտեցավ հրաժեղախ ժամը, հայրը, մայիսյան այն մար-  
տիկը, զրկեց իրեն ու նայեց իր փոքրիկ փայլուն աչքերին

— Այս գիշեր կպայթի մեր ոռւմբը, այս գիշեր կհաղթենք մենք, ու վազը, յերբ բացվի արջալույսը, յես կյանքը կը երեմ ձեզ՝ Ու ինքը մնաց տանը, ու մայրը մնաց տանը և հայրը գնաց մարտի և հայրը գնաց ոռւմբի դաշտ...

Ու այդ գիշեր, յերբ փոթորիկ կար ու խավար, բանակները շարժվեցին իրավ դեմ, պայթից վերջին ոռւմբը և լայնարձակ դաշտում ընկան հերոսներն արի ու ընկավ և նա՛ իր հայրը, մայիսյան այն մարտիկը...

Ու յերբ ժամանակը սահեց, յերբ անցավ գիշերը խավար և փայլեց արեղակն, ինքը զըկեց մորը ու թե

— Կդա հայրիկը հիմա, նա ինձ այդպես ասաց:

Ու զուռը բացեց մայրը և յերկար սպասեցին նրանք, բայց չեկավ նա՛ մայիսյան այն մարտիկը...

Դարձյալ ժամանակը սահեց ու գարձյալ տան զուռը մնաց բաց...

— Նա կդա, կդա հայրիկը. նա ինձ այդպես ասաց, չե՞ զոր փայլում և արեց, չե՞ զոր բացվել և արջալույսը:

Բայց հայրը չեկավ...

\*

Հետո՞ անցան որեր ու մի խավար գիշեր, ինքը բացեց զուռը և իր մարտիկ հոր պես ուղմի դաշտ յելափ...

— Մայր, այս գիշեր կպայթի մեր ոռւմբը, այս գիշեր կհաղթենք ու վազը, յերբ բացվի արջալույսը, յես կյանքը կը եմ քեզտ:

Ու մայրը մնաց տանը, և ինքը գնաց մարտի...

Արջալույսին կրկին այն տան դուռը բացվեց և զեմքում մայրը կանգնեց՝ կինը մայիսյան մարտիկի...

Արեւ փայլում եր, արեւ ժողուում եր...

— Մայր, ահա բացվեց արջալույսն ու ահա յես յեկա և կյանքին եմ բերել քեզտ

Ու մայրը զըկեց վորդուն, և խնդաց նրա անխինդ դեմքը...

— Բացվել և զորդիս, բացվել և խկական արջալույսը. ահա սրան եր ձգտում քո ընկած հայրը

Նա հիմա ել ավելի մեծ է, իր հոր պետ իսկական մարտիկ և հիջում է, մայիս, քո արշալույսն արյունզա, յերբ կյանքը դնդակ եր, դիմակ եր ու արյուն...

Նա տեսել է արյան չիթերի մեջ պարող արեկ շողերը, և իր մանուկ սրտից հռուել է արյուն...

Մայիս, արնակարմիր մայիս, անա նվիրում ե քեզ նա իր սիրաը, թող դնդակներն ու սումբերը պայթեն, թող հռու իր սրտի արյունը փողչ, թող այդ արյան չիթերի մեջ դարձյալ արեկ շողերը պարեն, մինչեւ փոր բացվի բոլոր, բոլոր յերկրներում, մայիս -

1930



ԳԼՈՒԽԸ  
(ԱԵՐՈՍԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ)

Սուրեն Հովհաննիսյանին

1

Տայդաներում ծառերը խիտ են և այնքան բարձր, վոր կապարներին լնքը՝ արեգակն են նստում:

Սակայն նրա ճառագայթները նեղս թափանցել չեն կարողանում և տայդաների խորքերում ցուրտ ու խավար են լինում:

Այդ ժամանակ դարձյալ սառնամանիք ու խավար եր. բայց նրանք անվեհեր կովում եյին հանուն ազատ կյանքի, հանուն հաղթանակի:

Կարմիր պարտիզանների հրամանատարն ասել եր.

— Մեր աչքերը լուսատու ջահեր և օրտերը խարսյկ ողիսի դարձնենք ու զրոնենք թշնամի բանդաների վրա Յես գիտեմ՝ ուժեղ և ատաման իվանենկոյի բանդան, քաջ տղաներ ունի նա, բայց չը վոր ժողովուրդը մեր կողմն ե, չե՞ վոր մեր բազուկներում կա նրա կամքը, ցանկությունը, հրամանը:

Ու խոր, մթին տայդաներում կրակվում եյին դնդակները, վորոնում եր քամին և տխուր սվավում եյին տերեները:

2

Նրանք դբոհեցին և դբավեցին առաջին, յերկար ձգվող մեծ ձորբը

Յեկան զորքերը և հայտնեցին հրամանատարին.

— Մենք թշնամիներից դերիներ ենք վերցրել:

— Ամբողջ բանդան պիտի վոչնչացնենք, յեթե... — ասաց հրամանաւարը, — իսկ այժմ նրանց պահենք մինչեւ վոր գիմացի սարնել դրավենք, հետո...

## 3

Մի շաբաթ անց, բարձրաբերձ սարի վրա ծածանվեց առաջին կարմիր զրաքակը

Հրամանաւարը պարտիզանը դուքտով գեղի իր զորքերն ու.

— Թանի հոգի յեն զերիներու:

— Չորս:

Բիչ մատեց:

— Կրակի բոլորին:

Պարտիզան հրամանաւարի հրամանն իսկույն պիտի կատարել, այլապէս՝ մի դնդակ ել ավելի կիրակվի:

Յերբորդ դնդակի ձայնն ել լովեց այդաներում:

— Կարմիր հրամանաւար, — լովեց չորսորդ գերու ձայնը. — յես յոթ որ մնացի ձեղ մոտ և հասկացա թե ինչու համար ենք պայքարում մենք և ինչու համար եք պայքարում դուք... Յես Միարեյ-կինն եմ, սպահակ բանդաների ատաման Խվանենկոյի յեղբայրը, նրա աջ ձեռքը և սուաջին զինակիցը: Մի սպանեք ինծ, ազատեք թողեք գնամ... Յես կապացուցեմ, վոր արժանի յեմ դրան, վոր...

Պարտիզան հրամանաւարը լուռ նայեց նրան:

Զերը ատապ գեղի յերկար բեխը և շփեց այն:

Պարտիզան հրամանաւարը խորհեց:

— Ազատ ես, Միարեյկին:

— Բայց չմ վոր...

— Ազատել նրան, — կրկնվեց հրամանը:

Սպահակ բանդաների ատաման Խվանենկոյի յեղբայր Միարեյ-կինը նուաեց ձի, մարակեց ու հեռացավ կարմիր պարտիզաններից, բարձրացավ կանդնեց ժայռերից մեկի վրա, նայեց գեղի հետ, հետո անհետացավ ատապաների խորքերում:

## 4

Յերբ որերն անցան, մեկը գարձավ գեղի կարմիր հրամանաւարն ու.

— Մենք աղատեցինք Միտրեյկինին՝ բանդաների ատաման Իվանենկոյի յեղբորը, նրա առաջին զինակցին, բայց նա չերեց, չարգարացրեց իր խոստումը:

— Ես հավատացի նրան, չե՞ փոր նա կողտի եր, — խուլ շընչաց հրամանատարը. — չի յերեա, վոչինչ, մեր ձեռքից չի պրժնի:

## 5

Առավոտյան յերք արել նորից նստեց ծառերի կտտարին, և լույսի ստվերն ընկավ տայդաների խորքերը, բարձրաբերձ սպաների վրա յերեաց մեկը:

— Ե՛յ, կարմիք պարտիզաններ, յես Միտրեյկինն եմ՝ սպիտակ բանդաների ատաման Իվանենկոյի յեղբայրը, նրա առաջին զինակցը. դուք գերի վերցընիք ինձ, բայց չսպանեցիք, դուք աղատեցիք ինձ, և յես ձեզ խոստացա արդարացնել այդ... ահա վերցընիք այս նվերը, վերցընիք այս գլուխը:

Կարմիք պարտիզանները սարսափանար նայեցին նրա պետի վեր բարձրացած ձեռքին:

— Ո՞ւմն ե այդ գլուխը, — հարցըրին նրանք:

— Սպիտակ բանդաների ատաման, իմ հորազատ յեղբոր Իվանենկոյինը, — պատասխանեց Միտրեյկինը՝ Իվանենկոյի յեղբայրը:

1932



## ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ

### 1

Փողոցում ձայները մեռած են և ծառերն են մերկի

Թամբին լուս գիշում և ու անցնում, և գեղին տերեներն են դուրս առաջ սովում:

Զուրն առաներով հոսում եւ և լուս վզվում է նաև

Հողից և փայտաց շինած տներում կա լաց, կա արյուն, խաչար և կա սով...

Իսկ նրանք քայլում են...

Դըսակոր ու ախուր են և զրջապատված են մարդկանցով, վոր ձեռքերին ունեն հրացան, սվին և մառվերի

Քայլում են...

Նրանք կովել են խտվարի գեմ, արյան գեմ, հետո՝ սովի ու մահվան գեմ, լսել ու խոսել են, թափել են իրենց զայրույթն ու մաղձն որերի վրա և նրանց գերել են, զղթայել ու ստիպել են, վար չլսեն, չխոսեն և իրենց սրտերում թաղին թույնը և որերի հլու հպատակը դուռնան:

Նրանք քայլում են:

Կամաց-կամաց բարձրանում են նրանց հոգնած վոտքերը. լրացնում են ինչ վոր զղթաների ձայներ և նրանք քայլում են, ու քամին և փշում և զուրն և լուս վզվում:

Մեկը կանգնում և շրջում և գլուխը...

— Մենք չենք գաղարի մեր պայքարից, մենք կը արունակենք այն...

Շարժվում ե մի ձեռք, բարձրանում ե մի հրացան, մի սվճն և պապում և կրակվում ե մի մառլզեր, ու գետին և ընկնում մեկը:

Փողոցը հուզվում ե և բարձրանում են զդթայված ձեռքերը:

Նրանց աչքերում ցասումն ե փայլատակում և ծառերի մերկ ճյուղերն են որորվում:

Բոլորն ել անշարժ են:

— Թայլել — բղավում ե մի մառլզերավոր...

— Այս թափված արյան համար զուք կհատուցեք մեզ, — դուռնում են զդթայվածները:

Յեկ գնդակիներն են կրակվում, հուզվում են սրտերը, իսկ գետնին ընկած մի մարդու ճակատից հոսում ե արյունը, և կարմրում է հողը:

## 2

Մեկը բարձրացնում ե գլուխը և ժպտում ե արեկնա նա քայլում ե փողոցով, ու տեսնում ե ծառեր, վոր կանաչել են և տեսնում ե զեմքեր, վոր ժպտում են:

Նա քայլում ե փողոցով:

Մի տեղ հանկարծ կանդ ե առնում, տեսնում ե հողի կարմրությունն ու շփում ե զեմքը:

...Նա հիշում ե անցյալը, սպանված ընկերոջը և նրա ճակատից հսկած արյունը:

Կծկվում են զեմքի մկանները, փոթորկվում ե սիրտը, բռունցքանում են ձեռքերը և արյունն է յեռում բազուկներում:

— Այնքան, այնքան արյուն ենք թափել մենք, այնքան հողեր են կարմրել ու այդ կարմիք հողերի վրա յի բարձրանում դասակարգը:

Մտածում ե նա և քայլում ե:

Բարձրացնում ե զեմքը և ժպտում ե արեկնա:

## 3

Զքերը հոսում են առուներով և յերգում են նըանք:

Քամին խաղում ե ծառերի տերեների հետ, իսկ մեկը կանգնել ու նայում ե փողոցն ի վեր և աեսնում ե, վոր կանաչել են ծաղկավորված ծառերը, և նրանց մեջ բարձրանում են քարե աները, վորտեղ կտ խինդ և կա վարդերի բույր:

Փողոցը լիբն և մարդկանցով և քայլում են դեպի վեր, դեպի վար, ու կյանքն և յեռում:

Յեվ մեկը մտածում ե...

...Այս փողոցում կձգվեն յերկաթե ռելոեցը, կանցնեն աըյունու հողերի վրայով ու կձգվեն, և ելեքտրոֆարշը կանցնի այդ փողոցով ու կրերի իր հետ խինդ, յերդ, և ժառերն ու մարդիկ կողջունեն նրան:

Հետո՝ կրանդվեն քաղաքի հին աները, կլայնանան բոլոր նեղ փողոցները և քաղաքի ամեն մի ժայրամասում կզբնդա ելեքտրո-քարչն ու կժաղկավորվեն շատ ժառեր:

Մարդիկ միշտ կկառուցեն նոր գիգանտներ և չեն մոռանա գոր ներկա հաջողությունների համար անցյալում հոսել և մարդ-կային վաս ու ալ արյուն:

1930



## ՅԵՐԳ

Արքիթեկն

Նա սիրեց մեկին և իր սրտում քանդակեց նրա պատկերը, կտուցեց պալատներ, վորտեղ շատրվանեցին ջրերը, նրանց մեջ կառապները լողացին ու արևն ել հրկիզեց ամենը:

Նա դարձավ իր սիրուհու ստվերը, իսկ աղջիկը հանեց նրա սիրտը և հեռացավ, անհետացավ:

Տղան յիրկար սպասեց նրան, մահացած ուրվականի պես թափառեց աշխարհը, սակայն չերեաց իր սիրուհին:

Յեվ, վորովհետև կրծքի տակ սիրտ չուներ, յերակներում ել չեր հոսում արյունը, փակեց աչքերը և հեռացավ աշխարհից:

Դու սիրեցիր մեկին, քո սրտում տեղ տվիր նրա սիրուն և ուրիշ վոչինչ:

— Կինը տղամարդու ստվերն և — ասացիր դու — յիս կայլեմ առաջ, թող նա հետեւ ինձ:

Ու կու քայլեցիր և ստվերդ ել հետևեց քեզ:

Նա չկարողացավ տեսնել քո դեմքը, քո ժալիաը և չկարողացավ վայելել քո սերը:

Յերբ դու հոգնեցիր, կանդ առար, զբայցիր հայացքդ, նայեցիր դեպի յետ, բայց... ստվերդ ել չկար...

Յես սիրեցի մեկին՝ սեացյա մի աղջկա, և իմ եյությունը հարզսա-  
տացավ նոր, սիրելի գդացմունքներով, խտացան բոլոր առարկաների  
դույները, դեղեցկացավ ամեն ինչ ու զեղին տերեների ներկայու-  
թյունն անդամ ինձ դարուն ավետեց:

Մենք միասին քայլեցինք զեղի առաջ և մեր յերկուսի ստվե-  
րը խաղաց հողի վրա:

Եկր մենք նայեցինք իրար, պարզ տեսանք մեր ժողովացող  
գիմքերը և մեր կրծքի տակ քարախեցին մեր սրտերը! Մենք սիրե-  
ցինք իրար և մեղք մյուսի համար չզոհեց այն, ինչ իր սեփականն  
եր, առանց վորի նա չեր կարող տեսնել լույսը, չնչել ողբը:

Յեզ մենք դո՞ւ ու յերշանիկ եյինք, վոր այդպես ենք սիրում  
իրար և դիմելինք, վոր մեր սերը ջառ տեսական կլինի, վոր կմա-  
հանա նա այն ժամանակ, յերք հավերժական քունք կնսակ մեր աչ-  
քիրին:

1932

119





## ՀԻՆ ՍԻՐՏԸ

(ԱՐԵՎԱԼՅԱՆ. 1696թ.)

Նա տիսուր, զատ տիսուր դեմք ուներ և լոռվթյուն ու խավար կաբ նրա հայացքում:

Դեմքի կնճըսների մեջ թաղփել եր թախիծը, իսկ մաղերի ճերամակությունն ավելի յեր ճերմակել:

Հոգու անհատակ խորքերում թագնված ուներ ինչ վոր անհայտ վիզտ:

Ցեվ միջտ լուռ ջրջում եր փողոցներն ու միջտ այդ անհայտ վշտի մասին մտածում:

Շատ անդամ նա հայացքը հասում եր դեղի անցյալը, դեղի անցած, հեռացած անցյալը և, ո զարմանք, բացվում եյին դեմքի կնճըսները, անհետանում եր հայացքում տիրող խավարն, ու խոսում եր լոռվթյունը:

Այդ ժամանակ նա մեղմ, դաղանի ժպտում եր, վոր վոչ վոք չտեսնի, չզգա, չհասկանա այդ:

Այդպես եր լինում, յերբ նա հայացքը դեղի անցյալը, հեռացած, անցած անցյալն եր հասում:

Բայց յերբ տարըների, դարանման տարիների անթափանց վարագույրը ծածկում եր հեռացածը, յերբ նա զգում եր, վոր ել չէա կրնը, անցյալը, վոր կա նրա դժակը միայն ու ներկան, նորից դեմքին ալքքում եյին խավարած կնճըսները, և հոգին ել արտառ վում եր:

Անցյալը գնաց, մահացավ, բայց յեր հարազատ վորդուն թողեց կենդանի, նվիրեց ներկային:

Ու մի որ, անցյալից ներկային մնացած մարդը մտածեց.

— Ի՞նչն ե, ի՞նչն ե պատճառը, վոր հինն այսքան գեղեցիկ ուրելի ու ժպտուն ե, վոր ներկան... ի՞նչը պետք և վոլենք վոր կյանքը առաջվա պես քաղցր ու հարազատ լինի ինձ:

Յեզ անցյալից ներկային մասցած մարդը վորոշեց.

— Սիրաբ, սիրաբ ողբախի փոխելու պղիտի հանել այնտեղից այն,  
ինչ հին եւ, ինչ պատկանում և անցյալին և խորի և ներկայի հա-  
մար, ինչ այսոր սիրելի ու ժգուռն չեւ Պետք և հանել բոլորը, և  
տեղը զնել նորը, ժպտացողը, փոք ներկան դարձյալ սիրելի, ցան-  
կալի ու պաշտելի զանեա, փոք բացվեն գեմքիս կնճըները և նըան-  
ցում շթադնվի փոչ մը խափար, փոչ մը լսությունն

Առ անցյալից ներկային մասցած մարդն այդպես ել վարվեց  
նա պոկեց, հանեց իր սրախց այն, ինչ հաբազատ եր անցյա-  
լին, ինչ նրա սեփականությունն եր, հանեց, փոք տեղը զնի նորը,  
փոք ներկան եւ անցյալի պես սիրելի լլնիւ

Յեզ յերբ անցյալից ներկային մասցած մարդը մաքրեց իր  
սիրան ու նայեց նրան՝ նկատեց, փոք տեղը մնացել և վոչինչ...

Սիրան ել չկար

1930



## ՄԵՆՔ ԿՀԱՆԴԻՊԵՆՔ

Յես հիմա ել հիջում եմ նրան ու նրա անփայլ աչքերը, յես  
հիմա դարձյալ սիրում եմ նրա սկ մազերով ծածկված գլուխը, և  
թվում ե թե նա կենդանի յե այնպես, ինչպես կենդանի յեմ յես

\*

Սովը խաղաղ եր ու լայնածավալը Մեր նավը պատռելով նրա  
կուրծքը, վազում եր գեղի առաջ...

Նավում կային նավաստիներ, նավապետն ու մենք՝ ճամբորդ-  
ներս

Միայն նա, այն սեահեր նավաստին դրավեց իմ ուշադրու-  
թյունը, վորն անընդհատ աշխատում եր, ու թվում եր, թե չի հոգ-  
նում...

Նավը ջարունակ տռաջ եր վազում, իոկ նա մերթ գեկն եր  
վարում, մերթ անհետանում և քիչ անց՝ դարձյալ յերեսում ճամ-  
բորդների մեջ...

Արել մայը եր մտնում, յերբ նրանց հայտնեցին, վոր ճաշելու  
ժամանակն է

Նավաստիները վազեցին դեպի ներքեի կայուտ-ճաշարանը:

Յես հետեւցի նրանց:

Նրանց տվյան սկ, հնացած հաց և միս:

Տերիտասարդ նավաստին նայեց մսին, հոտ առավ նրանից ու  
շպրտեց այն և վազեց դեպի վերև:

— Մենք Չուն չենք, — լսվեց նրա ձայնը:

Բոլորը դեպի վեր վազեցին:

Հուզվեց նավը:

— Այդ ի՞նչ ձայն ե — լսվեց նավապետի՝ ծանը դեմքով մէ-  
ժարդու՝ ձայնը:

— Մեղ շան տեղ մի զներ; — առաց յերիտասարդ նավաստին, — շան պես աշխատեցնում եք որ ու գիշեր, հետո մի կտոր հին և սե հոց ու մի կտոր ել հոտած միս տալիս:

— Դուք շան պես կաշխատեք և կլափեք այն, ինչ լափում են շները, — պատախանեց նավապետը:

— Վոչ:

— Այո:

Ու յերիտասարդ նավաստու աչքերի անփայլ հուբը վառվեց...

— Մենք մարդ ենք:

— Դուք չուն եք — դուռաց նավապետը:

Նա, այդ յերիտասարդ նավաստին, վերցրեց դանակն ու վաղեց գեղի նավապետը, սակայն բանեցին նրան ու կազոտեցին ձեռքերը...

Նավապետը մոռեցավ նրան, վուաքով մի քանի հարվածներ ավելց:

— Նավապետ, նա մարդ է, — մոռենալով նրան, ձայնեցի յետ նույից ինձ ու դռաց.

— Դուք, պարհն մի հասարակ ճամպորդ եք և վոչ մի իրառունք չունեք իմ դորժերին խառնվելու:

Յես անծանվի ու հասարակ մի ճամպորդ եյի, բայց և այնպես սիրեցի այդ յերիտասարդ նավաստուն և զատ առեցի նավապետին:

Նա, յերիտասարդ նավաստին նոյեց ինձ, գրաց, վոր յետ ել եմ իր պես մտածում, ու մենք անթարթ աչքերով դիմեցինք իրար:

— Նետել ժամկը խոռվարելին, — հանկարծ լովեց նավապետի իրամուր:

Նավաստիները գրկեցին յերիտասարդ նավաստուն և բարձրացրին գետի վեր...

— Մենք կհանգիտենք, նավապետ, և այն ժամանակ վայ ձեզ Փոթորկվեց լայնածավալ ու խաղաղ ծովը, և նա թաղվեց նրա գրկում...


— Հայ, հայ, հայ, — ծիծաղեց նավապետը, — մենք կհանգիտենք, վարաեղ, ծովի հատակիմում...

Միջադեպին և ճամբորդներից զատերը Յես անթարթ աչքերով գիտում եյի նավապետին: Ետ նոյեց ծովին ու ժողոտով ավելացրեց:

— Շուտով, ջուտով կհանդիպենք իրարւ  
 Յես անթարթ աչքերով գիտում եյլ նրան։ Նա նկատեց  
 հայացքս ու մոտեցավ ինձ։  
 — Հը՛, չինի՞ թէ մենք ել կհանդիպենք։  
 — Այս, մենք ել կհանդիպենք, — պատասխանեցի յես ու ան-  
 հետացաւ։

Ու որեքն անցան և ժպտաց մեր արեւ, և սկսեցինք մահ տալ  
 նրանց, վրոնք մահ եյլն տալիս մեզ...  
 Դաշտը լայն եր, ու այդ լայն գաղտում կանգնած եյլն տառը  
 հոգի, վորոնց պիտի գնդակահարելինք։  
 — Կրակելու լսվեց կարմրի հրամանատարի ձայնը։  
 — Սպասեցեք, — հանկարծ գոռացի յես։  
 Վաղեցի դեպի հանցավորներն ու հայացքս հառեցի նրանցից  
 մեկի վրա։  
 — Նավազետ, — ջջնջացի յես։  
 Նա լսեց ձայնա, նայեց ինձ ու ցնցվեց...  
 — Ո՞վ եք դուք, — հարցրեց նա...  
 — Ձեր նավի անծանոթ ու հասարակ ճամբորդը։  
 — Ա՛խ, — ճանաչեց ինձ, — և մենք հանդիպեցինք իրար, —  
 ավելացրեց նա։  
 — Այս, — պատասխանեցի յես։  
 — Ել չինք հանդիպի. — զարունակեց։  
 — Կրակելու կրկնվեց հրահանգը, և լսվեց գնդակների ձայնը...  
 \*

Յես հիմա ել հիշում եմ նրան ու նրա անփայլ աչքերը, յես  
 հիմա դարձյալ սիրում եմ նրա սև մտղերով ծածկված գլուխը, և  
 թվում ե, թէ նա կենդանի յե այնպես, ինչպես կենդանի յեմ յես։



## ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԱՐԵՎ, ԲՐՈՆԶԱԿԴԵՄ ՄԱՐԴ...

ՀԵՆԻՆԻՆ

Յերկնքում վառվում եր արեւ, խորհրդային բորբ արեն ու իբ  
ջողերով դրկում մեր յերկը գաշտերը, լեռները, պյուղերը, քաղաք-  
ներն ու արտերը, և արտերում յերգում եյին վոսկեդույն հաս-  
կերը:

Ժողովում եյին անջունչներն ու ջնջավորները և նայում խոր-  
հրդային արեին, ու նրա ճառագայթները վարվում եյին նրան  
և ջնջում եյին նրանք ու խնդում եյին նրանք:

Յերկնքում վառվող խորհրդային արեւ նայում եր մեր յերկը-  
րում առյօն այն մեծ մարդուն, ու ժողովում եր մեծ մարդը և իբ  
հուրերատող աչքերով նայում խորհրդային արեին, ու ժողովում  
եյին խորհրդային արեն ու բրոնզագեմ այդ մարդը:

Նա մեկ եր, բայց մեծ, ու ձուլվել միացել եր միլիոններին,  
ինդում եր նրանց հետ, սիրաը բարախում եր այդ միլիոնների  
համար, և փոքրան անչեղ, անմար մի հուր կաը նրա աչքերում:

Խորհրդային արեւ, բրոնզագեմ մարդ...

Ահա նորից արեւ փայլեց յերկնքում, ժողով, նայեց մեր  
յերկըին ու բրոնզագեմ այն մեծ մարդուն, հետո սահեց գեղի  
արեմուաք...

Բըոնզագեմ այն մեծ մարդը նայեց արևին, ժպտաց, և նա, վոր զգացել, հասկացել ու ըմբռնել եր անցյալում դալիքի պայծառությունը, այսոր ել զգաց, հասկացավ ու ըմբռնեց, վոր չետեսնի ել մայր մտնող արելի արջալույսը և իր վերջին հըաժեշտի վողջույնը ավեց նրան:

Դարձյալ յերկնակամարում յերեաց վառվող արելը, նայեց դառաղի մեջ պառկած բրոնզագեմ այն մեծ մարդուն, ու շարժվեց ողը, և լսեցին այդ մասին պյուղերը, լեռները, դաշտերն ու արմերը, և հուզվեց արելը, հուզվեց յերկիրը:

Խորհրդային արել, բրոնզագեմ մարդ...

Եերկնքում վառվող խորհրդային արել կամեցավ տիսրեւ, ըայց նայեց յերկրին, տեսավ, վոր այնտեղ, միլիոնների որտում, ապրում ե այն մեծ մարդը, ժպտաց ու ասաց.

— Կպտամեմ, կպտամեմ դալիքին քո մասին, խորհրդային ժպիտով ժպտացող բրոնզագեմ մարդ!

Միլիոն սրտեր հուզվեցին խորհրդային մեր յերկրում, միլիոն դայլեր վոռնացին մեր յերկրի ներսում ու զբում, բայց յերկաթի անումը հուժիու յեւ, ազատ և իդուր և դայլերի վոռնոցը:

Խորհրդային արել, բրոնզագեմ մարդ...

Նըտերում կորորվեն վոսկեղույն հասկերը, վոսկեղույն հառերը կհնձվին արտօրից, իտուց քո մասին մի անուշ հուզ կմնա դաշտերում, ու գաշտերը կպտամեն արտերում նոր բումնող վոսկեղույն հասկերին...

Դեռ խորհրդային մեր յերկրում ջատերը կընկնեն ջատերի նման, դեռ յերկար կվունան գացլերը, բայց կծնվեն ըյուր միլիոնները մեծ մարդու պես, ու աճումը կհորդանա մեր յերկրի կըրծաբում:

Թող հիմա յերկնքում վառվի, հուրիրատող խորհրդային արելը, թող իր ջողերով դրկի դաշտերը, քաղաքները, գյուղերն ու արաերում որորվող վոսկեղույն հասկերը, և թող վոռնան դայլերը, ընկնեն խորհրդային մարդիկ ու ծնվեն նորերը, միլիոնները...

Խորհրդային արել, բրոնզագեմ մարդ...



## ՀԻՆ ՅԵՐԳԸ

Դու զարձյալ հին յերդն ես կը կնուռ ու կարծում ես, թե նույնն  
է, և կարծում ես, թե նույնն է, ու ասում ես, թե աշխարհն ան-  
փոփոխ է.

Դու զարձյալ հին խոսքն ես կը կնուռ.

— Դնացիր, բայց ջուտով յետ կդառ

Դու զարձյալ միշտ նույն որելոն ես՝ հիշում, յերբ սիրում եյինք  
իրար, ու կարծում ես, թե այդ որերից ու սիրուց բացի՝ ուրիշ  
որեր ու սեր չկատ

Յերկնքում լուսնյակ և վայլել իսկ ներքենում նստել ենք ժա-  
մաների տակ, և մեր ծեր պատկերն ու աստերը պատմել են մեզ հե-  
րիսթներ՝ հակաների մտախն...

Դաշտերում դարունն երացվել արտերում համեկերն են հասել,  
ու հուղել ես սիրաս, և սիրել եմ յետ քեզ, ու սիրել ենք մենք  
իրար

Յերբ նորից զարունն երացվել դրկել եմ յետ քեզ ու ասել,

— Կդնամ քաղաք, ուսում կանեմ, հնաս կդամ ոյուղ ու ար-  
տերում կերպի արտակարը, և մենք կամունանանք:

Դու ասեի ես, վոր մեր արտերը գութանը պիտի վարի, մեր  
համեկը մանդազը հնձի, և վոր մեր հողե խրճիթում նավթի ճրագը  
պիտի վասվիտ

Ու դրկել ես ինձ, ու փարվել ես ինձ և տոել.

— Դու զյուղումը կմնաս

Յետ չեմ լսել քեզ ու անցել եմ քաղաք, իսկ դու կանգնել ես  
համովի յեղրին և հայտնել.

— Կդնաս քաղաք, կափսուսս և յետ կդառնաս:

Յեզ հիմա այն հին յերդն ես յերգում ու կարծում ես, թե

նույնն ե, ու կտրծում ե՞ս՝ նույնն ե և ասում ես, վոր աշխարհն անփոփոխ ե:

Ասում են, վոր յերբ արկը յելնում ե սարից, դուքս ես դալիս հողի խրճիթից ու կանգնում ճամպի յեզրին և սպասում, թե դուցն վերադառնամ յես ու սիրեմ քո դութանն ու մանգաղը, իսկ յերբ արել մայր ե մտնում, տխուր անցնում ես խրճիթ ու դարձյալ կրկնում հին խոսքը.

— Չեկավ, բայց ջուտով հետ կդա:

Ցես կդամ, կդամ նորից պյուղ, նորից կփարվեմ արտերին լեռներին, դաշտերին, նորից լուսնյակը կփայլի յերկնջում, ու նորից կնսանենք ժառերի տակ, և այն ժամանակ յերկաթը, ջահել յերկաթը քեզ չատ հեքիաթներ կպատմի...

— Արտերը տրակտորը պիտի վարի, — կասի նա:

— Հասկերը մեքենան պիտի հնձի, — կասի նա:

— Հողե խրճիթները քարե կդառնան, — կերպի նա:

— Նավթե ճրագները կմեռնեն, և կվառվի ելեկտրական ճրագը, — կպատմի նա:

Ցեվ յեթե լսես ու սիրես նրան, կոիրեմ և յես քեզ կփարվեմ արտերին, դաշտերին, լեռներին և քեզ, իսկ յեթե նորից ասես, վոր արտերը դութանը պիտի վարի, հասկերը մանգաղը հնձի, և հողե խրճիթում նավթի ճրագը վառվի, — այն ժամանակ յերբ արկը դուրս յելնե լեռներից, դուրս կզատ խրճիթից ու կկանգնես ճամպի յեզրին և կսպասես նրան, վորը ոլիտի դա քեզ քո դութանը, քո դերանգին ու հողե խրճիթներում վառվող նավթի ճրագը սիրելու, և այդ մեկը չի դա... Յերեկը, յերեկը...

Երեք կթագնվի լեռների յետեռում, կանցնես խրճիթ, կվառեն նավթի ճրագը և կրկին հին խոսքերը կասես.

— Գնաց, բայց կփերադառնա:

Իսկ յես կոիրեմ ուրիշին, կփարվենք իրաը ու յերկաթի հետ միացած՝ արտերը կվարենք, վոսկե հասկերը կհնձենք և նորերին դաշտերին, անտառներին ու լեռներին՝ յերկաթէ հեքիաթներ կպատմենք...

Բայց ինչու, ինչու հիմա այն հին յերդն ես կրկնում ու կարծում ես թե նույնն ե, ու կարծում ես թե նույնն ե և պսում եմ, թե աշխարհն անփոփոխ ե:

Քեզ, իմ սիրած աղջիկը ու քո հին հոգուն յերկաթե յերպեր կերպի իմ տրակտորը, ու դու, իմ սիրած աղջիկը նոր յերպեր կերպեա, կտսես, վոր փոխվում և աշխարհը և փոխվում էս յիս:

1929



## Մասրւ

Սիրելի մոբս

Մայր, ինչպես կարող եմ մոռանալ քեզ:

Թու արդանդում դու յերկար կրել ես իմ քաղցը ժանրությունը  
իսկ յերբ ծնվել եմ, շնչել եմ քեզ վորպես ոդ, տեսել եմ քեզ, վոր-  
պես լույս:

Մայր, ինչպես կարող եմ մոռանալ քեզ:

Եերբ կանգնել եմ վոտքի, վազել եմ դեսպի քո պիրկը ու առա-  
ջին բառը, վոր տրտասանել եմ, այդ քո անունն է յեղել:

Եես սկսել եմ մեծանալ, կամաց-կամաց տեսել եմ դրսի աջ-  
խարհը, բայց առաջին իրը, առաջին գույնը, ձայնը և քաղցը բույրը,  
վոր յես հասկացել, ճանաչել եմ, այդ յեղել ես դու

իմ առաջին խաղընկերը, առաջին բարեկամը յեղել ես դու, և  
իմ բոլոր դադանիքները միայն քո ականջին եմ զջնջացել:

Մայր, ինչպես կարող եմ մոռանալ քեզ:

Իմ հորը, հիջմամ ես, յես չտեսա, նա ընկավ կըմի դաշտում և  
կրծքից հոսեց կարմիր արյունը:

Եես միայն տեսա քո աչքերից հոսող արցունքները, վորսնք  
ջատ անդամ ընկան այտերիս ու այրեցին նրանց  
հետո՝ յես մնացի վորբ...

Եես ծծեցի քո ստիճնքների արյունը և մեծացաւ:

Մայր, ինչպես կարող եմ մոռանալ քեզ:

Հիմա յես մեծացել եմ, բուսել են դեմքիո մաղերը և ինքո ել  
կարող եմ աշխատել պայքարել նոր կյանքի կառուցման համար:

Նայիր ինձ, իմ սիրելի մայր, և թող քո դեմքին կանաչի ժպի-  
տը, թող քո աչքերից միայն ուրախության արցունքներ հոռն:

Մի որ գարծյալ կհնչե մարտահրավերը, և յիս ել պատերազմի  
դաշտ դուրս կդամ...»

Ի՞նչ վախճառմ ես վոր հորս պիս կրծքիցս արյան հոսի...

Ա՛, վոչինչ!

Դիտեմ, յերբ կըտակին դնդակները և ընկնեմ յիս, դողդոջուն  
ձեռքով հրացանս կըոնի մի ծեր կին և կկանգնի իմ տեղը:

Մայր, ինչումս կարող եմ մոռանալ քեզ:

1932



## ԴԵՐ ՎՈՐՔԱՌՆ ԳԱՐՈՒՆՆԵՐ ԿԲԱՑՎԵՆ...

Յերեկ անխինդ, իսկ այսոր խնդացող փոքրիկ քույրիկ իմ, ինչ  
անուշ, ինչ մեղմ զննջում ես ականջիս:

— Մեր յերկրում գարուններ են բացվում, ու դեռ վորքան  
դարուններ ել կրացվին:

Ու յես լսում եմ, լսում եմ քո հայրիչ ձայնը, և մեր յերկրում  
դարուն ե բացվում:

Իմ փոքրիկ սրբելի քույրիկ, յես լսում եմ քո ձայնը, յես նա-  
յում եմ քեզ ու քո անցան եմ հիջում, մանկությունն աշնանա-  
յին...

Քո հայրը կովի դաշտում ընկափ, քո մայրը սովոր մահացավ  
ու դու մացրի վորք, ինչպես դեղին մի աշնան տերեւ, ու վչեց  
քամին և որորեց քեզ...

Դու այն ժամանակ չատ, ջնա փոքրիկ եյիր, որերը չեյին  
ժողում քեզ ու գոչ ել գու որ՝ բըն, և անցնում, թափվում եյին  
քո կյանքի որերը, վորպես աշնանային դեղին, զալկացած տերեւ-  
ներ...

Բայց արեք ժպտաց, ու մեր գարունը յեկափ, և խնդացիք դու...

Ու նետվեցիք դու դու պայքարի գլուկը, և աշխատանքն ու  
պայքարը յեղան քո ծնողները...

Վորտեղ ժողով կար, այնտեղ կայիր դու, վորտեղ խնդում  
եյին, քո խնդրությունն ել կար, ու ամենքը սրբում եյին քեզ, և  
ամենքին ել՝ դու

Արեք ու կյանքի զողերի մեջ, փոքրիկ քույրիկ իմ, կոմյերիս  
այն աղան ժպտաց քեզ, հուզեց ու հուզեցիք և դու նըան

— Յես սիրում եմ քեզ, — ասաց նատ

— Յես ել՝ քեդ, — պատասխանեցիր դու:

Յեվարեն արենց և աճեց մեր յերկրոն, իսկ կռմյերիտ այն տղան, վոր հուզեց քո սիբար, փոքրիկ քույրիկ իմ, զրկեց ու համբուրեց քեզ:

— Մեր յերկրում գարուններ են բացվում, — ասաց նա:

— Դես փոքրան դարուններ ել կրացվեն, — պատասխանեցիր դու:

Յեվ հիմա զուք ապրում եք, զուք սիբում եք իբար ու աճում եք և խնդում եք ու պայքարում, փոքրիկ քույրիկ իմ և նրան սիբուզ կռմյերիտ տղան:

Խնդացող փոքրիկ քույրիկ իմ, դարնան դարուն, յես ել քեդ պես տեսնում եմ նոր կյանքի աճումը և խնդում եմ, մասնակցում եմ ու աճում եմ:

Յերեկ անփենդ, իսկ այսոր խնդացող փոքրիկ քույրիկ իմ, ի՞նչ անուշ, ի՞նչ մեզմ ջջնջում ես ականջիս:

— Մեր յերկրում զես փոքրան դարուններ կրացվեն:

1930



## ԿԱՆԳՆԻՐ

Կանդնիր:

Այդպես համարձակ ու գտահ կանգնիր աշտաքակի վրա, իմ հարազատ յեղբայը, իմ սիրելի ընկեր. և թող հայացքդ արտերի ու դաշտերի վրայով, դետերի ու ծովերի վրայով, և լեռների ու ձորերի վրայով ալանա դեպի հեռուները, դեպի դաշտերի կանաչը, ջրերի ու յերկնքի կապույտը, բարձրաբերձ ժայռերի մոխրությունն ու թփերի խտությունը:

Հրացանդ թող ամուը բռնված լինի ձեռքումդ, ովինը սուր լինի և գնդակը՝ հատու:

Թող տեսանելի լինի քեզ հեռուներում ամեն անտեսանելին, և հասկանալի՝ անհասկանալին:

Գիտմոս, վոր հիմա ուժեղ պայքար ե, պայքար՝ կյանքի և մահան միջն, պայքար՝ հնի և նորի միջն, պայքար՝ շղթաներից ազատվելու համար, պայքար՝ մարդկությունը շղթայելու համար:

Ուզում են, վոր դաշտերում, զյուղերում և քաղաքներում ել չլինի լացը սովը:

Ուզում են, վոր գյուղերում և քաղաքներում սով ու արցունք լինի, և դաշտերով հոսի մարդկային արյան վարար գետը:

Կառւցում են խոշոր գիգանտներ, վոր ստիպում են դետերին:

Փոխել իրենց հունը, ջրերին՝ դասնալ և լեկտրական լույս, վոր չեն թողնում մարդկային մի անգործ ձեռք:

Կառուցում են գործարաններ, վոր պատերազմի համար նետում են բյուրավոր թնթանոթներ, իսկ մարդկանց շուկա յեն շողբառում:

Հոկաներ են կառուցում, վոր սովոր և լաց են արտադրում:

Յեվ ուժեղ պայքար և այս յերկու աշխարհների միջև, պայքար՝ հանուն սահմանների, հանուն կյանքի:

Ու գու կանդնիր սահմանադլիխն, աշտարակի վրա, և թողհայցք գետերի ու ծովերի վրայով, լեռների ու ձորերի վրայով և արտերի ու գաշտերի վրայով սլանա ղեղի հետուները, ղեղի դաշտերի կանաչը, ջրերի ու յերկնքի կապույտը, բարձրաբերձ ժայռերի մոխրությունն ու թփերի խոռությունը:

Կանդնիր:

Կանդնիր աշտարակի բարձրության վրա և իմացիր, վոր միացյալ արտերի հերոսները, կառուցվող հոկաների հերոսները, քեզ հետ միասին պայքարում են կյանքի և մահվան համար, հաղթոնակի և կառուցման համար:

Կանդնիր աշտարակի բարձրության վրա և թող սահմանը հողաբանաւ քո ներկայությամբ:

1932



## ՄԱՅԸ

Ցերք գերեղման ես զնում քո ջատ սիրած եյտկին, քեզ թվում  
ե, վոր նրա հետ հողը դրիբ հենց քո հույսերը, քո նողատակիը,  
սերը, սիրտը և նրանից հետո ել արժեք չեն ունենա քեզ համար  
վոչ գարունը, վոչ գարնան կանաչն ու վարդերի բույրը, վոչ լայ-  
նարձակ դաշտերը, վոչ լեռները և վոչ հոսող առուները

Դու այդ ժամանակ հենց գերեղմանին ես հաճանում քեզ

Բայց յերբ անցնում ե ժամանակիը, յերբ խոտը ծածկում է  
քեզ սիրելի հողաբուրը, զրաի աշխարհը քո ուղեղի մեջ սկսում է  
թողնել իր հետքը, վորը հետո խտանում ե, ու դու նայում ես  
նրան:

Նորից ճանաչում ես կանաչը, հոսող առուները և առնում ես  
վարդերի բույրը

Նորից աշխարհը սիրելի յէ դառնում քեզ

Ե՞ն, ապրոք, սիրելի բարեկամո, և թող քեզ թվա, վոր կանա-  
չով ծածկված հողաբուրի տակ թաղված և միայն քո եյտելյան  
սիրել մասնիկներից մեկը



## ՄԵՐՈՒԹՅՈՒՆ

Մի՛ ծերամարդ ինձ ասում ե.

— Դիտե՞ս թե քանի տասնյակ տարիներ եմ գետի քարերէ պես դլորել քանի տասնյակ ձմբան ձյուն եմ հալցրել և քանի անդամ եմ տեսել ծառերը ծաղկավորվելը, կանաչելն ու կանաչի գեղնելը:

Դիտե՞ս թե ինչ որեր եմ տեսել յես, ինչ գետնահարկում եմ տորբել իմ մանկությունը, ինչըսն եմ յեղել սոված, իսկ յերբ մեծացել եմ, մետցել եմ անուս ու դործարանն և յեղել իմ միակ զպրոցը:

Այս հենց այդ և պատճառը, վոր յես այսպես ծերացել եմ, վոր մերժակել են մտղերո, կնճռոտել և դեմքս, մարել և աչքերիս լույսը և լավ ել չեն լուսմ ականջներու:

Բայց, այս զու լով լսիր, յերբ յես հիմա նայում եմ բարձրացող ծխնելու յզներին, ծխի խրտ քուլաներին, կողեկտը վ զաշտերն, նոր ծնփող քաղաքներին, լայնացող փողացներին, կառուցփող ամուր տներին, խնդացող մարդկանց, հագատմամ հո, յես նրանց մեջ զդում իմ իմ մանկությունը, յես մանկանում եմ, ջանելանում, և արյունը դարձյալ հոխորարով հոսում և յերակներով, ուժեղ բարախում և ոփրաս ու խոտանում և աչքերիս լույսը:

Այս, յես հիմա իմ ծերության զեղեցիկ մանկությունն եմ տորբում:



## ՆԱՐԺՈՒՄԸ

\*

Շատ, շատ կղարմանանք մենք, յերբ ներկայից դեպի անցյալը  
շպրտվենք:

Այսաեղ մենք կտեսնենք համարյա վայրենի մարդկանց, վո-  
րոնք ապրում են ծառերի վրա, ուտում են վայրի դաղաններ ու  
դռուում են նրանց պես:

Հետո կտեսնենք մարդկանց, վորոնք սկսել են ճանաչել հողը,  
ապրում են փայտե խրճիթներում, մարդկանց, վորոնք յերկար ժա-  
մանակ տեսնում են միայն մի տեղի բնությունը:

Մենք կտեսնենք մարդկային յերկյուղ, վոր ծնում և անձրել,  
քամին, կայծակը:

Կտեսնենք մարդկանց, վորոնք լծում են ուրիշներին ու վարում  
հն հողը:

\*

Իսկ յեթե հանկարծ այդ մարդկանց քարայրներից, ժառերից  
պոկեն ու շպրտեն ներկային, միթե չեն քարտնա նրանք

Կտեսնեն մեծ, խոզոր քաղաքներ, բարձրահարկ տներ, լույսեր,  
վոր ծնում և հողմը, ջուրը, և կտեսնեն մարդկանց, վոր քամիների  
ու ողի մեջ են քայլում:

Կտեսնեն, վոր անցյալում անջատ յեղած գաղտերը այժմ միա-  
նում են, մեծանում, լայնանում և ուժեղանում և յերկը կանաչը,  
յերկնը կապույտը:

Կտեսնեն, վոր արդեն մետաղացած, ամուր պայքար կա յերկու  
դասակարգի միջն, վոր հաղթանակը ազխատանքի կողմն և, քրախն-  
քի, արյան կողմն և:

Բայց յեթե մեզ ներկայից նետեն դեպի առագան... Ո՞ւ, միթք  
կարելի յե ասել, թե ինչ կտեսնենք մենք

Լայնարձուկ զաշտերում փոփած կլինեն քաղաքները, կամ գու-  
ցե հենց ամբողջ աշխարհը դառնա մի հոկա, անսահման, անեղբ  
օտզաբե


Մարդկային աշխատանքը գիտանտներ կբարձրացնի, վոր մար-  
դու համար հողից կխլի նրա հյութը, ջրերից՝ նրանց ուժը, բնու-  
թյունը կժառայիցնի իրեն և իրկնքից ել մոլորակներ վայր կբերիր

Ապրոյ մարդիկ չեն յերկյուղի բնության տարերքի, անտծո-  
տաց, իրար չեն նայի առելությամբ, իրենց մեջ չեն ունենա  
միմյանց ոդատագործելու թույնը և հոկա պայքար կմղեն՝ պիտու-  
թյան, արվեստի զարգացման համար:

Այդպես եւ կառուցողը միջա փոխում և աշխարհը, և ամեն  
անցյալ իրեն աեսնում և առագայի ժայրամասերում, նրա սովոր-  
ների մեջ:

1932





## ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Եւրքեմն անպատմելի մի տիրություն պատում ե ինձ, ժանը լոռւթյամբ լոռում ե հոգիս, և ինչքան մտածում եմ, դարձյալ չեմ կարողանում վորոշել թե ինչո՞ւ յե նա այցի յեկել ինձ:

Միայն զգում եմ, վոր թագնված կարոտով հիջում եմ անցյալը, ինչ վոր մահացած հուզեր, ինչ վոր արգեն մնաած դեմքեր կըծում են հոգիս, զգում եմ, վոր անցյալը կամենում ե բարձրացնել գլուխը, կտմենում ե ցուցյ տալ իր գեղեցկությունը, ուժը, հմայքը և նույնիոկ վերադարձը իրավունք ե պահանջում:

Զգում եմ, վոր նա ուժեղ պայքարում ե իմ մեջ՝ յեղած ուրախության հեա, վոր ինձ տվել են՝ լայնածավալ գաղտերը, բարձրացող գիտանտերը և պայքարող, կառուցող ու խնդացող մարդկի ժամանակը սահում, անցնում ե, իսկ պայքարն ավելի յե հորդանում:

Ե՞յ, ինչ ես տվել ինձ, տիրություն:

Դու ընկճել ես հոգիս, գերել ես իմ կամքը և խավարի մեջ ել թաղել ես կյանքս:

Հեռացիք, յես չեմ ուզում քո ներկայությունը քո հմայքը, քո մռայլությունը, մահացնող քո թույնը, տես, յես միանում եմ ուրախությունը, տես, յես պայքարի յեմ յելում քո դեմ:

Ու յերբ կամաց-կտմաց պայծառանում ե միտքս, յերբ հանգարաւում ե խոռված հոգիս, նայում եմ զուրջո և տեսնում եմ, վոր տիրությունը մենակ նստել ե գուան մոտ ու տիրությամբ նայում ե դեմքիս:

Նոտ չի կամենում անհետանալը մանանալը

Յեսուս ուրախությունը կդարձնեմ հաղթանակի ողբոց կըարձրացնեմ ամեն բարձրությունից ել վեր ու կպայքարեմ քո դիմություններ

1931



## ԴԻՐ ՔՈ ԿՆԻՔԸ ԴԱՐԻ ՎՐԱ

Դիր քո կնիքը դարի վրա, կերտիր քո պատկերը նրա լայն  
կտավի վրա, հետո, կուղես գնաց, հեռացիր ու թող քեզ չհիշեն հա-  
վերժական ձյունով ծածկված լեռները, վարար հոսող գետերը, դե-  
ղին արտերն ու կանաչ դաշտերը:

Թող քո մասին վոչ վոք շառախ, թող վոչ մի գըքում չզրվի քո  
անունը:

Դու միայն դիր քո կնիքը՝ քարի վրա, հավերժական ձյունով  
ծածկված լեռների վրա, վարար հոսող ջրերի վրա, դեղին արտերի  
ու կանաչ դաշտերի վրա, հետո՝ կուղես գնաց, հեռացիր, և թող  
պարը քեզ չհիշեն

1932



## Լետը

Յես կանոնում եմ դաշտում և լուս գիտում եմ, թէ ինչպիս են հոսում այս վարար, այս դորշագույն զետը, ինչքան ուժեղ են ալիքում նրա ջրերը, վոր զարկվում են քարերին, ցատկում նրանց վայով, հետո՝ առաջ սլանում, լիզելով ափերի հողը:

Սիրելի բարեկամ, թող քեզ թվա, վոր գու ել մի կաթիլ ջուր և այս գետի մեջ և նրա ալիքների հետ հոսում ես զեղի անհուն-ներու:

Դորշագույն ջուրն առաջ ընթանալիս միլիոնավոր կանելներ կլողնե հողում, գուցի հենց քեզ եւ և առաջ հոսելիս ել զետը քեզ չի ունենա իր մեջ:

Սիրելի, ջնա սիրելի բարեկամ, ո, չախրես գու, չկարծես թէ կորար, վոչնչացար:

Ա՛յ, կդա դարունը՝ կկանաչն հասկերը, ժառերը, կդա ամառը՝ կհոսնեն մըդերը, աշնան ել բամբակը դաշտերում կձյուն և նրանց մեջ կերհու գու, կըարձրանաս վեր ու կմարմարվեստ

1932





## ՄԻ ԳՐՈՂԻ ՅԵՎ ՄԻ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՄԱՍԻՆ


Յերազները միւս խանդարել են նրա քունը, իսկ ցերեկն անձրել ե պատկերների, դեմքերի ու գեպքերի զարանը, և նա իբ հանդստությունը վոչ մի տեղ չի կարողացել գտնել:

Թափառել ե անտառներում, բարձրացել ե անհասանելի լեռների գաղաթները և մտցով ել սավառնել ե Մարս:

Եեվ յերեսուն տարիներն ընկույզի պես զլորվել են ժամանակի ծառից, յերեսուն անդամ ծաղկել ե նշենին ու վարդենին ե կարմրել, իսկ նա այդ յերկար, ջատ յերկար ժամանակի ընթացքում զբել ե յերեսուն մեծ վեպերի... վերնագրերի...

Նա ել հաճախել ե աղխարհիս բոլոր մեծ զբադարանները, վորտեղ անդամ կային չգրված գրքեր, իր տանը ունեցել ե բոլոր մեծ մարդկանց մտքի հասկերի հատիկները և իր ամբողջ կյանքում կարդացել ե քսան մեծ վեպերի... վերնագրերը:

1931



## ՀԱՅՆԵ

Այդ գրողը դիմեր, զոր Հայնեն թափանցել և մարդկային սրափի խորերը, տեսել և այնտեղ կանաչ դաշտեր, բարձր՝ ձյունապատ լեռներ, կապուտակ լճեր և նրանց մեջ՝ լողացող ճերմակ վերիներէ

Հայնեն շատ լավ եր ճանաչում մարդկային սիրտը

Նա դիմեր, զոր Հայնեն դիշերներն արեգակներ և զպրտել դեղի յերկինք, զոր միշտ լույս լինի, զոր յերեան կանաչ դաշտերը, բարձրագագաթ լեռները

Հայնեն աշխատանքն իր ամենասիրելի ընկերն եր դարձրել:

Նա դիմեր, զոր Հայնեն յերդել և սերը, սրանքի սիրտը և անմանցըրել և դեղեցկությունը

Նա դիմեր, զոր Հայնեն յերդել և մարդկային ազատությունը, բարձրացրել և ազատ կամքի, ազատ խոսքի զբո՞ր:

Հայնեն պարզ տեսնում եր, հասկանում եր մարդկային յերթի ուղին:

Նա դիմեր և այն, զոր այդ մարդը, բանաստեղծների բանասեղծը, սրանքից ամենագեղեցիկը, յերկար ժամանակ տառապել և մեջքուղեղի ցագով, հետո փակել և աչքերն ու հրաժեշտ ավել աշխարհին, կանաչ դաշտերին, կապուտյա լճերին:

Տաղանդը, հանճարը ովկիանացել եր Հայնեյի մոտ:

Ու նա կախվեց պատմության ծառից, վորպիս մշտադալար մի ճյուղ:

Յեվ այդ գրողն ուզեց ինքն ել հայնեյանալ, յերգել յերգերի յերգը, ազատությունը, հետո ննջել Պառնասի կանաչաղարդ այգում:

Ու կամեցավ իր մեջ տեսնել գտնել այն, ինչը բանաստեղծ դարձրեց Հայնեյին, կամեցավ իր մեջ տեսնել այն ույժը, վոր ճանաչում և մարդկային սիրտը, վոր տեսնում և հեռու ազագան, կամեցավ իր մեջ գտնել հայնեյական տաղանդի, հաճնարի տվյալները...

Յեվ յերբ տարիներն անցան, խնդությունը ծիծաղեց նըս դեմքին, փոթորկվեց սիրտը և աչքերից կայծակի կաթիլներ ժայթքեցին:

Նա հայնեցման ճանապարհին եր... իր և Հայնեյի միջև նմանության շատ գծեր գտավ... մեջքուղեղն արդեն ցավել եր սկսել...

1933





## ՄՈԽԻՐԸ

Մեկը ծխում ե, և ծուխը բարձրանում է վեր, միանում է յերկընքի կապույտին, հետո անհետանում է նրա հետքը:

Ծխախոտը կամաց-կամաց մոխրանում ե, մոխրը թափում ե մոխրաման, հետո քամիներն ան նրան պարեցնում ողում, վերջում ել թաղփում և փողիների հաստ շղարջի տակ:

Ի՞մ սիրելի բարեկամա, բնությունն ել քեզ և ծխում, քո կյանքն ել և ծխախոտի պես ծխանում, մոխրանում, բայց յեղիք այնպես, քոր ծխացած, մոխրացած քո անցյալը չթափիվի մոխրաման, քամիները չպարեցնեն նրան, հետո թաղեն փողիների հաստ շղարջի տակ:

1933



## ԳԵՏԸ

Լայն տափարակով հոսում եւ գետը և իր ջուրը տալիս եւ հողին, քարին, իր ափիցին բարձրացող ծառերին, ու նրանք աճում, բարձրանում են։

Յեզ նա մրցա այդպես, այդ անչունչ գետը, անկանդ հոսում եւ իր ջուրը, իր ույժը առալս եւ նրան, ով կանգնում եւ իր ճանապարհի վրատ

Բայց զու մարդ ես, վոր ջնջում, մտածում ես, վոր տեսնում, ղեկավարում, փոխում ես աշխարհը, զու մի լինի զետ և քեզ մի բաշխի ամենքին, հողին, ծառըն, ճյուղըն, զու ընարիը մի ծառ, մի քար ու նրան տուր քո դործը, քո միտքը, քո կյանքը

1933



## ՍԻՐՏԸ

Ո՞խ, ի՞նչքան սպիտակ և այս ձյունը, վոր յեկել, ծածկել և  
հողը, ծառը, ճյուղը

Նայ ը գեղի հեռունեթը՝ սպիտակությունը չունի սկիզբ, չու-  
նի վերջ!

Արքադ լցում և անհուն բերկությամբ, յերբ նայում ես դու  
ձյունի այդ ճերմակ մաքրությանը:

Ուզում ես, վոր նա չնալչի, չանհետանատ

Ուզում ես, վոր վոչվոք և վոչւնչ չպղծի նրա ճերմակու-  
թյունը:


Արքիմի բարեկամո, զու համարձակ քայլիք նրա վրայով, վոտ-  
նահարիք, կեղասամիք այն, վոչինչ... դարունը կդա, կհալչի վոտնա-  
հարփած, կեղասափած ձյունը, հետո ել ձմեռ կլինի և հողի վրա,  
ծառի ու ճյուղի վրա դու գարձյալ ձյունի սպիտակ սավանը կտես-  
նես ու նրա ճերմակ մաքրությունը:

Բայց զու մի քայլիք իմ որտի վրայով, մի վոտնահարիք, մի  
կեղասամիք այն, վորովհետեւ և վոչ մի դարուն չի հալիցնի այդ  
կեղար, վոչ մը ձմեռ ել նրան չի տա իը հավերժ կորցրած ձյունի  
մաքրությունը:

1933

## ՑԱՆԿ

	ԵՎ
1. Ի՞նչ դեղեցիկ, ինչ թարմ են վարդերը . . . . .	5
2. Մայիսյան արջալույսը . . . . .	7
3. Գլուխը . . . . .	10
4. Աբովյան փողոց . . . . .	13
5. Ցերդ . . . . .	16
6. Հին սիրտը . . . . .	18
7. Մենք կհանդիպենք . . . . .	20
8. Խոհրդային արև, բըռնղաղեմ մարդ . . . . .	23
9. Հին յերգը . . . . .	25
10. Մայրը . . . . .	28
11. Դեռ վորքան գարուններ կբացվեն . . . . .	30
12. Կանգնիր . . . . .	32
13. Մահը . . . . .	34
14. Ծերություն . . . . .	35
15. Շարժումը . . . . .	36
16. Տիրություն . . . . .	38
17. Դիր քո կնիքը դարի վրա . . . . .	40
18. Հետքը . . . . .	41
19. Մէ դրոդի և մէ ընթերցողի մասին . . . . .	42
20. Հայնե . . . . .	43
21. Մոխիրը . . . . .	45
22. Գետը . . . . .	46
23. Սիրտը . . . . .	47



ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



FL0394704

(204.)

264  
1194

ԳԻՆԸ 2 ՈՂԵԲԱՐ



ГАРЕГИН БЕС  
СИХОТВОРЕНИЯ В ПРОЗЕ  
ГИЗ ССРА Эревань 1938